

9574

Գրուետարներ բոլոր յերկրների, միացեց

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄԻ ՀԵՌԱԿԱ ԿՈՒՐՍԵՐ

ՔԻՄԻԱՅԻ  
ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

Կազմեց Ա. ՏԵՐ-ՇԹԱՆԱՑՅԱՆ

ԳիւԸ  
Цена 15 ԿՈՊ.  
կօպ.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»  
1932 ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

APM

2-604a

24 JAN 2007 865

Պրոլետարներ ըոլոր յերկըների, միաց

ugk 8 JUL 2010

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄԻ ՀԵՌԱԿԱ ԿՈՒՐՍԵՐ

54 (07)

4-26

2-604a



94

## Կազմեց Ա. Տեր-Աթանասյան

ANB. No 21325

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»  
1932 թ. ԽՈՏՏՈՎ-ԴՈՆ

## ԱԽՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Ընկերներ, յնընի, լսած կլինեք քիմիայի մասին. դա այն գիտությունն է, վոր խոշոր նշանակություն ունի թե կյանքում և թե ժողովրդական անտեսության մեջ:

Այժմ ձեզ հարկավոր ե մոտեկից ծանոթանալ քիմիային և ձեռք բերել քիմիական գիտելիքներ: Այդ գիտելիքները կողման ձեզ ճիշտ մատերիալիստական աշխարհաճայցը ունինալու և գիտակցաբար վերաբերվելու ձեր շուրջը տեղի ունեցող հասարակական և քաղաքական խնդիրներին:

Բացի այդ, քիմիական գիտելիքները կնպաստեն ձեզ ավելի գիտակցաբար մասնակցելու յերկրի սոցիալիստական շինարարության գործին:

Քիմիան գործնական գիտություն է, այդ իսկ պատճառով ձեր աշխատանքի հիմքը, այդ բնագավառում, պետք ե կազմեն գիտողությունը և փորձը:

Դրված խնդիրները լուծելով, հարցերին պատասխանելով և նյութը մշակելով, դուք ինքներդ ձեռք կրերեք հարկավոր գիտելիքները:

### Ա.Ռ.ԶԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿԵԼՈՒ ԶԵՎՀ

Առաջադրությունները կազմված են 2 մասից—գործնական աշխատանքներ և տեսական ամփոփումներ:

Առաջադրությունների մասին նախ և առաջ, հարկավոր ե ուշադրությունը դրծնական մասը և ըստ հնարավորության աշխատանքները Անդնելով աշխատանքի՝ ամենից առաջ մտա-



ծողության նյութ դարձրեք այդ աշխատանքի վերնագիրը: Վերնագրի մեջ արտահայտվում ե աշխատանքի նպատակը, վոր պետք պարզ լինի ձեզ համար: Այնուհետև հասկացեք, թե ինչու համար ե կատարվում փորձը: Դրա համար կապ պետք ե փորունեք տվյալ փորձի և նախորդների մեջ: Փորձի նկարագրությունը կարդացեք կետ առ կետ և վարվեք այնպես, ինչպես ցույց ե տալիս փորձի նկարագրությունը:

Կատարված փորձերի նկարագրությունը, փորձի դրվածքի նկարները, ինչպես և փորձերից հանած ձեր յեղակացությունները պետք ե զրի առնեք առանձին տեսարի մեջ: Փորձեր կատարելու համար տեղերում հնարավորություն և հարմարություններ չլինելու դեպքում, պարզ ե, վոր աշխատանքներ չեք կատարում, այլ ծանոթանում եք փորձի ընթացքին միայն, վորից նույնպես շատ բան կարող եք հասկանալ և վորոշ գաղափար կազմել՝ յերեւոյթն ուսումնասիրելու համար:

Առաջադրության նյութը բաժանված է գլուխների կամ յենթաթեմաների և յուրաքանչյուր գլխի վերջում դրված են ստուգողական հարցեր: Նյութը մշակելիս պետք ե սկսեք սկզբից և աստիճանաբար առաջ գնաք, աշխատելով, վոր վոչինչ անհասկանալի չմնա: Մի գլուխ մշակելուց և նյութը յուրացնելուց հետո գրավոր կերպով պետք ե պատասխանեք այդ գլխին վերաբերող ստուգողական հարցերին—բառանձին թերթիկների վրա կամ ուսերի մեջ: Առաջին գլուխը մշակելը վերջացնելուց հետո միայն անցնում եք հաշորդ գլխի մշակման և այդպես շարունակ:

Նշած ձեռով առաջադրության ամբողջ նյութը մշակելուց և ստուգողական հարցերին պատասխանելուց հետո, վերջում հարցեր ուղղեք այն բոլորի մասին, վոր տվյալ առաջադրության մեջ ձեզ համար անհասկանալի մնաց:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեզ շրջապատող բնության մեջ մենք զանազան մարմիններ ենք տեսնում և կյանքում զրանց հետ միշտ զործ ենք հւնենում (մարմիններ են կոչվում այն բոլորը, փորունք

վորոշ տեղ են բռնում տարածության մեջ և ունեն կշիռ): Այդ մարմինները բնության մեջ անփոփոխ և անշարժ վիճակում չեն գտնվում, այլ նրանք շարունակ յենթարկվում են փոփոխության:

Մարմինների հետ կատարվող փոփոխությունները լինում են թե բնության հետևանքով և թե մարդկանց միջոցով—այսինքն արհեստական յեղանակով: Որինակ, ջուրը սառչում է, հալվում, գորոշիանում է: Բույսը փթում, ծառը ջարդվում, յերկաթը՝ ժանգոտում: Փոքրիկ սերմերը հողի մեջ ընկնելով, վորտեղ խոնավություն և տաքություն կա, աճում, հասունանում և պառող են տալիս: Քարածութի կամ փայտի կտորը վառարանում այրելիս մի մասը զար դառնալով ցնդում է ողում, իսկ մի մասն ել մոխիր ե դառնում և մնում ե վառարանի մեջ: Դիմին քացախ ե դառնում, կաթը՝ մածուն և այլն:

Այս բոլորը փոփոխություններ են, վոր կատարվում են մարմինների հետ: Մարմինների հետ կատարվող ամեն մի փոփոխություն կոչվում է յերեվույթ:

Դիտելով մեր շուրջը կատարվող յերեսույթները, մենք նկատում ենք, վոր բոլոր այդ յերեսույթները յերկու խմբի յեն բաժանվում:

Յերեսույթ կա, վորի ժամանակ մարմին նյութը չի յենթարկվում փոփոխության, այլ փոխվում ե նրա ձեզ կամ վիճակը: Որինակ, քարը կոտրում մանրացնում ենք, այդ ժամանակ քարի նյութը փոփոխության չի յենթարկվում: Փայտը ծռում, կոտրում, տաշում ենք և նրանից զանազան իրեր պատրաստում: Այս բոլորի ժամանակ փայտը մնում է փայտ և իր նյութը և նյութի հատկությունները պահպանում ե: Մի ուրիշ որինակ, ջուրը ցրտից սառում է, տաքությունից հալվում, հեղուկ ե դառնում և ապա՝ գործիքանում: Այստեղ ես սառուցի, ջրի և գոլորշու նյութը՝ ջուրը մնուա և անփոփոխ և պահպանում ե իր բոլոր հատկությունները:

Այն բոլոր յերեսույթները, վորի ժամանակ փոփոխության են յենթարկվում նյութի ձեզ կամ վիճակը, իսկ

նյութը և նրա հատկությունները մնում են անփոփոխ՝ կոչվում են Ֆիզիկական յերեվույթներ: Մեր բերած բոլոր որինակները Ֆիզիկական յերեսույթների որինակներ են (նման որինակներ բերեք ինքներդ):

Յերեսույթներ կան, վորոնց ժամանակ փոխվում են թե նյութի ձեզ, թե վիճակը, թե նյութը և թե նյութի հատկությունները: Այդպիսի յերեսույթները կոչվում են Ֆիմիական յերեվույթներ:

Որինակ, մոմի այրվելը, փայտի վառվելը, բույսի փթելը, գինու քացախվելը, յերկաթի ժանգոտվելը, սերմի աճումը, սրանք այնպիսի յերեսույթներ են, վորոնց ժամանակ փայտը, մոմը, բույսը, գինին, յերկաթը այլևս գոյություն չեն ունենում. Նրանք վերափոխվում են բողորովին ուրիշ նյութերի: Քիմիական յերեսույթների ժամանակ ստացվում ե նոր նյութ, վորն իր հատկություններով բողորովին նման չի առաջին նյութին (կամ նյութերին): Որինակ, յերկաթը ժանգոտելուց հետո զոյանում ե յերկաթի ժանգ, վորը չունի յերկաթի փայլը, ամրությունը և այլն. մոմի այրվելիս ստացվում են զազեր և ցնդում ողում. այդ գաղերը իրենց հատկություններով միանգամայն տարբեր են մոմի նյութից և այլն (ինքներդ բերեք քիմիական յերեսույթների որինակներ):

Քիմիական յերեսույթների հետ դուք ավելի մանրամասը կծանոթանաք դասի ընթացքում, մանավանդ, յերբ ինքներդ կկատարենք այդ ուղղությամբ գործնական աշխատանքներ:

Այժմ մի քանի խոսք այն մասին, թե ինչ նշանակություն ունի քիմիան մեր յերկրի պաշտպանության, սոցիալիստական շինարարության և գյուղատնտեսության վերակառուցման համար:

Խորհրդային Միությունն ամեն կողմից շրջապատված է թշնամիներով—կապիտալիստներով, վորոնք աշխատում են տապալել խորհրդիների իշխանությունը: Նրանք այդ վորձն արեցին Հոկտեմբերյան հեղափոխության առաջին

տաղիներում, բայց այդ նրանց չաջողվեց: Նրանք շարունակեցին իրենց դափաղը թյունները ԽՍՀՄ դեմ, թեպետ և շատերը նրանցից հարաբերություններ ստեղծելով ԽՍՀության հետ, ըսկանցին առևտուր անել: Կայիտստալիստները այսոր սուս ու փուս սոսկալի զենքեր են պատրաստում մեր դեմ—թունավոր գաղեր: Նրանք ցանկանում են խորհրդային յերկիրը թունավորել՝ թունավոր գաղ բաց թողնելով մեր յերկրի բանվորության և աշխատավոր գյուղացիության վրա: Թունավոր գաղերը պատրաստում են քիմիական յեղանակներով. քիմիան ե, վոր հնարավորություն և ստեղծում այդ գաղերը պատրաստելու:

Ի՞նչ պետք ե անի Խորհրդային Միությունը: Միթե պետք ե ձեռքբերը ծալի ու նստի և նայի, թե ինչպես են, մեր թշնամիները գործի դնում իրենց քիմիական գործարանները և թույներ պատրաստում ԽՍՀՄ-ի բանվորների և գյուղացիների համար: Վհչ, Խորհրդային Միությունը յերկրի պաշտպանության համար ստեղծել և ստեղծում է քիմիական պաշտպանություն: Հարկ յեղած զեղքում նույն թունավոր գաղերով թշնամուն պատսախանելու համար: Ահա թե ինչ նշանակություն ունի քիմիան մեր յերկրի պաշտպանության համար:

Մեծ քանակությամբ քիմիական նյութեր պատրաստելու համար հարկավոր են զանազան քիմիական գործարաններ, վորտեղ պետք ե պատրաստվեն նաև անհրաժեշտ քանակությամբ հակագաղեր՝ բաց թողած թունավոր գաղերից պաշտպանվելու համար: Այդ բոլոր ձեռնարկումները միասին կազմում են, այսպես ասած, ուազմա-քիմիական արդյունաբերությունը:

Վոչ մի պետություն, սակայն, ի վիճակի չի կառուցել ուազմա-քիմիական գործարաններ՝ վորոնք նյութեր պատրաստելին բացառապես պատերազմական նպատակների համար, թե ինչ ե, յերբեկցե պետք ե պատերազմ լինի:

Խաղաղ ժամանակ յերկրի համար շատ քիչ ուազմաքիմիական նյութեր են հարկավոր: Խաղաղ ժամանակա հա-

մար հարկավոր ե, ինչպես ասում են, խաղաղ քիմիա, վորը բանվորության և գյուղացիության համար պատրաստի ոգտակար նյութեր և իրեր: Այս իսկ ոլատճառով, բոլոր պետությունները ձգտում են ստեղծել և զարգացնել խաղաղ քիմիական արդյունաբերություն, բայց այն հաշվով, վոր պատերազմի ժամանակ կարողանան ծառայեցնել և ուղմական նպատակների համար: Իսկ դա առանձին դժվարություն չի ներկայացնում, վորովհետեւ ուղմական և խաղաղ նպատակների համար ծառայող նյութերն իրար շատ նման են թե կազմության և թե հումույթների տեսակետից: Բացի այդ, թե մեկ և թե մյուս տեսակի արդյունաբերության համար բոլոր գործիքները և գործարանական սարքավորումները համարյա նույնն են և մի քանի ուղմական թունավորող նյութերն առանց վերամշակման յենթարկելու կարող են գործադրվել և խաղաղ պայմաններում—գյուղատնտեսության մեջ վասարավուների դեմ պայքարելու դործում և բժշկության և առողջապահության մեջ իրեր հականեխիչ միջոցներ:

Այս բոլորից պարզ ե, վոր և. Միության բանվորներն և աշխատավոր գյուղացիությունը պետք ե ստեղծեն այնպիսի քիմիական արդյունաբերություն, վոր խաղաղ ժամանակ ուղտակար լինի գյուղատնտեսության և քաղաքի արդյունաբերության համար, իսկ պատերազմի ժամանակ տա այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ է յերկրի պաշտպանության համար:

Ներկայումս Խորհրդային Միության մեջ կազմակերպված ե յերկրի պաշտպանության և ավիացիայի ու քիմիական արդյունաբերության աջակցող ընկերություն, վոր կըրճատ Պաշլ-Ավիաֆիմ և կոչվում:

Այս ընկերությունը նպատակ է դրել աշխատավոր մասսաներին քաշել յերկրի պաշտպանության պատրաստման մեջ՝ նրանց կազմակերպել այնպես, վոր պատրաստ լինեն առանց շփոթվելու և վարժ ու կազմակերպված ձեռվ թշնամուն դիմավորելու:

Յուրաքանչյուր գիտակից բանվոր և գյուղացի, ինչ-  
պես և ուսանող ու գպրցական, պետք և անդամ դառնա-  
այդ ընկերության և ամբողջ ուժերով աշակցի Պաշը-Ավիա-  
քիմի աշխատանքներին:

### ՔԻՄԻԱՆ ՊԱՐԱՏԱՑՆՈՒՄ Ե ԴԱՇՏԵՐԸ

ԽՍՀՄ յերկրագործական յերկիր և Սակայն մեր հողը  
մի քանի անդամ պակաս բերք և տալիս, քան արտասահմա-  
նում, վորովհետեւ մենք հողը վատ ենք մշակում:

Ճայտնի յե, վոր բույսերը հողից սննդանյութեր են  
վերցնում, վորի ջնորհիվ աճում, մեծանում ու պտուղ են  
տալիս: Տարիներ շարունակ բույսը հողից սննդանյութեր և  
վերցնում, հողն աղքատանում և սննդանյութերից և այնու-  
հետև հողում ցանված բույսերը լավ չեն աճում ու վատ  
բերք են տալիս: Վորպեսզի հողը լավ բերք տա, հարկավոր  
և հողի մեջ մտցնել բույսի համար անհրաժեշտ սննդանյու-  
թեր, վորպեսզի բույսը լավ աճի ու լավ բերք տա: Իսկ վեր-  
տեղից վերցնել բույսին անհրաժեշտ սննդանյութերը: Ահա  
այստեղ ե, վոր մեզ ոգնության և գալիս քիմիան: Նրա ոգ-  
նությամբ են պատրաստվում այն բոլոր սննդանյութերը,  
վոր անհրաժեշտ են հողի պարարտացման համար: Այդ սննն-  
դանյութերը կոչվում են քիմիական պարարտանյութեր: Այդ նյութերով հողը պարարտացնելու գեղքում մեծ չափով  
բարձրանում և բերքատվությունը:

### ՔԻՄԻԱՆ ՊԱՇՊԱՆՈՒՄ Ե ԴԱՇՏԵՐԸ ԶԱՆԱԶԱՆ ՎՆԱՄԱՑՈՒՆԵՐԻՑ

Գյուղատնտեսական վասարաբների գեմ պայքարելու  
գործն անհետաձգելի և առաջնակարգ խնդիրներից մեկն և  
հանդիսանում գյուղատնտեսության վերակառուցման բնա-  
գավառում և նրա բարենպատ լուծումից և կալաված Միու-  
թյան սահմաններում ապրող ժողովրդների բարեկեցությունը:

Բոլոր գյուղացիները գիտեն, թե ինչ վասաներ են հաս-  
նում դաշտերին մկները, մորեխները և այլն տեսակի վա-

սամուները: Հետազոտությունները ցույց են տվել, վոր այդ  
վասատուները տարեկան, Խորհրդային Միության մեջ  
վոչնչացնում են 1.250.000 տոնն միայն հացահատիկ: Ահա  
այս վասատուների գեմ պայքարելու և նրանց վոչնչացնե-  
լու գործումն ե, վոր ողնության և գալիս քիմիան: Թունա-  
վոր նյութերի քիմիան գյուղացիության տալիս և զորավոր  
միջոցներ, վորոնցով նա մեծ չափով փրկվում է այդ վա-  
սատուներից և զգալի չափով բարձրացնում բերքի տոկոսը:

### ՔԻՄԻԱՆ ՇԱՐԺՈՒՄ Ե ՏՐԱԿՑՈՒՐԸ

Վորպեսզի հողը լավ բերք տա, բավական չի, վոր  
նրան միայն պարարտացներ, այլ պետք է նրան և լավ մը-  
շակել՝ առաջին հերթին՝ լավ վարել:

Մեր հայրերը և պապերը հողը վարում եյին պրիմիտիվ  
գործիքներով (արորով) և գանդաղաշարժ ու սակավառւժ  
յեղներով: Ներկայումս հողը վարում են տրակտորներով:  
Դա այնպիսի մի մեքենա յե, վոր թե արագ և թե լավ և  
վարում հողը: Տրակտորը շարժողության մեջ դնելու հա-  
մար հարկավոր և հեղուկ վառելանյութ, վոր կոչվում ե բեն-  
զին, իսկ բենզինը ստացվում է նավթից դարձյալ քիմի-  
ական յեղանակներով: Բենզինը գործ է ածվում ամեն տեսակ  
շարժիչների—ավտոմոբիլների, սավանակների համար և այլն:

Գյուղացիական տնտեսության համար հարկավոր են  
նաև զանազան այլ տեսակի նյութեր՝ կուպր, ձյութ, անիվ-  
ները քսելու յուղեր և այլն: Այստեղ նույնպես առանց քի-  
միայի չի կարելի վոչինչ անել: Քիմիան այդ նյութերը ստա-  
նում է քարածխից և ծառից: Քիմիան քարածխից ուրիշ  
շատ բաներ և ելի ստանում, վորոնք անհրաժեշտ են  
մեր սննդեսության զարգացման համար—որինակ գունավոր  
ներկերի մեծ մասը, լուսագաղ և այլն:

### ՔԻՄԻԱՆ ՄԵԶ ՏԱԼԻՄ Ե ՅԵՐԿԱԹ, ՊԴԻՆՉ ՅԵՎ, ԱՅԼ ՄԵՏԱՂՆԵՐ

Թե ինչպիսի նշանակություն ունեն սետաղները (յեր-  
կաթ, պղինձ, անագ, կաղար և այլն) մեր կյանքում, բոլո-  
րին հայտնի յե:

Յեկ իրոք, շատ զժվար և յերեակայել թե ինչ կլիներ մարդկության գրությունը, յեթէ նա հնարավորություն չունենար մետաղներ ստանալու:

Հայտնի յե նաև այն, վոր մետաղները բնության մեջ ազատ վիճակում չեն գտնվում (յերկաթ) կամ գտնվում են ազատ չնչին քանակությամբ (պղինձ): Մետաղները մեծ մաշատ ընդունում են սիացած ուրիշ նյութերի հետ, կամ ինչպես ասում են՝ հանքերի ձևով:

Մաքուր մետաղ ստանալու համար հանքերը յենթարկում են մշակման: Այստեղ գարձյալ գլխավոր գերը քիմիային և պատկանում: Քիմիական միջոցներն են, վոր հնարավորություն են տալիս հանքերից մետաղներ ստանալ և ողտագործել:

Յեզ վերջապես քիմիան ե, վոր հնարավորություններ և սաեղծել պատրաստելու շինանյութեր (կիր, գաջ, ցեմենտ), մորթիներ մշակել սննդամթերքներ պատրաստել դեղորայք, ապակի, թուղթ, սապոն և այլն և այլն:

Այս բոլորից պարզ պետք ելինի բոլորի համար, թե ինչ հսկայական նշանակություն ունի քիմիական արդյունաբերության զարգացումը մեր յերկրի պաշտպանության, սոցիալիստական շինարարության, ինդուստրիալի զարգացման և գյուղատնտեսության մեքենայացման ու բերքատվության բարձրացման համար: Այս թե ինչու Խորհրդային Միության առաջ իր ամբողջ մեծությամբ կանգնած ե քիմիական արդյունաբերության զարգացման հրատապ և անհրաժեշտ խնդիրը:

Նկատի ունենալով նշած հանգամանքները, Միության հնգամյա պլանում քիմարդյունաբերության զարգացմանը մեծ տեղ և տված: Մեզանում գոյություն ունի եժան ելեքտրոներգիա, վորը լայն հնարավորություն և տալիս քիմիական արդյունաբերություն ստեղծելու և զարգացնելու:

Ուրեմն հարկավոր և կառուցել քիմիական գործարաններ, վորոնք մեզ կտան այն բազմաթիվ նյութերը, վորոնք անհրաժեշտ են մեր յերկրի սոց. վերակառուցման համար

մասն բնափավառներում, իսկ հարկավոր մոմենտին այն ուազմա-քիմիական նյութերը, վորոնք անհրաժեշտ են ԽՍՀՄ պաշտպանության և թշնամիներին հականարված տալու համար, յեթե նրանք հանգնություն ունենան մեր վրա հարձակվելու:

Ինչպես Խորհրդային Միության այլ մարզերում, նույնպես և Հյուսիսային Կովկասում քիմիական արդյունաբերությունը արագ զարգանում ե և 2-րդ հնգամյակում ել ավելի արագ տեմպերով զարգանալու յե՝

Հյուսիսային Կովկասում քիմիական արդյունաբերության զարգացման հիմնական ցուցանիշներն են՝

1927—28 թ.	9,7	միլիոն	ո.	արտադրանք
1931—թ.	106	»	»	»
1932—թ.	23,7	»	»	»
1-ին հնգ-կում (4 տարում)	57,9	»	»	»
1937—թ.	804,9	»	»	»
2-րդ հնգ-կում	1495,7	»	»	»

Հյուսիսային Կովկասի քիմ. արդյունաբերության զարգացումը 2-րդ հնգամյակում, համեմատած 1-ին հնգամյակի հետ, կազմում է 2583,2 տոկոս և վառելիքից հետո առաջին տեղն ե բռնելու:

Քիմիական արդյունաբերությունը Հյուսիսային Կովկասում զարգանալու հետեւյալ ռեսուրսները ունի:

1. Նավթի, կոկսացման և մետաղագործական արդյունաբերությունների ավելցուկները (օտհօծ) և գաղերը,

2. Հանածոներ (մերորելիտ, իոդ, բրոմ, ֆոսֆորիտներ և այլն):

3. Գյուղատնտեսությունից (յեզիպաացորեն, արեածաղկի ցողուն, կառչուկատուներ և այլն):

Բացի Հ.-Կովկասի արդյունաբերական հին կենտրոններից (Ռոստով-Դրոզնից և այլն) քիմիական արդյունաբերությունը զարգանալու յե և նոր վայրերում ու առանձնապես աղգային մարզերում՝ Կարաչայի ավտ. մարզ, Դաղ-

տանի հանրապետություն, Կաբարդինո—Բալկարիայում, հնգուշեթիւնում:

Խ. Հայաստանի հնգամյա պլանը քիմիական արդյունաբերությունը զարգացնելու նպատակով հետեւյալ ձեռնարկութիւնն և նախատեսելով 1) Ալլահվերդում կառուցել ծծմբաթթվի և պղնձարջասպի գործարաններ, 2) Աղոստական պարագատանյութեր պատրաստող գործարան Դարաքիլսայում, 3) Լրացուցիչ վերակառուցման յենթարկել Յերևանի Կարբի գործարանը և այլն:

Այս կառուցամերը պերճախոս ապացույցներ են, վոր Խորհրդային Միության քիմիացման խնդիրին անհրաժեշտ աշխացումն և ստացել մեր արդյունաբերության 5-ամյակում, և թե ինչ խոչըր չափերով և առաջ ընթանում քիմարդյունաբերության զարգացումը:

Քիմիական արդյունաբերության զուգընթաց անհրաժեշտ և պատրաստել նաև արդյունաբերության համար վորակյալ աշխատավորներ, վորոնք զինված պետք և լինեն քիմիական անհրաժեշտ գիտելիքներով:

Այդ նպատակից յենելով վորակյալ կադրեր պատրաստող բոլոր դպրոցական հիմնարկներում քիմիան աստիճանաբար իր տեղն և գրավում:

Այժմ անցնենք մեր աշխատանքներին, քիմիական գաղափարների ու յերեվույթների ուսումնասիրության:

### ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ Հ 1

Այս առաջադրությամբ մենք պետք են ծանոթանանք նյութերի կրած փոփոխություններին թե ողում և թե տարացման ժամանակ: Կտեսնենք նաև, թե ինչ մասնակցություն ունի հողը նյութերի փոփոխման գործում և թե ինչ փոփոխության ենթարկվում այդ պրոցեսում:

Միաժամանակ ուսումնասիրելու յենք թթվածին գաղը, վոր պատճառ և դառնում նյութերի փոխակերպման ողում, նրա ստանալու յեղանակներին, հատկություններին և ոգտագործմանը:

Առաջադրած խնդիրներին մոտիկից ծանոթանալու համար պետք է մի քանի պարզ փորձեր կատարենք մետաղների հետ:

Մետաղները խոշոր նշանակություն ունեն կյանքում և տեխնիկայում: Նրանցից շատերի հետ մենք համարյա միշտ դորձ ունենք: Այդ պատճառով ել քիմիական յերկույթների ուսումնասիրությունը մենք սկսում ենք մետաղներից և նրանց ողի մեջ կրած փոփոխություններից:

### ՄԵՏԱՂՆԵՐԻ ԿՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԴՈՒՄ

Աջամատանք 1. Վերցրեք մի կտոր մաքուր յերկաթ և մի կտոր ել մաքուր պղինձ, զրեք սեղանին ու դիտեք նրանց 5-10 րոպե: Ի՞նչ փոփոխություններ եք նկատում յերկաթի, պղնձի գույնի մեջ:

Աջամատանք 2. Վերցրեք նույն յերկաթի, պղնձի կտորները, բռնեք ունելիքով (առանձին-առանձին) ու տաքացրեք սպիրտայլոցի կամ կրակի վրա նույնպես 5-10 րոպե: Ի՞նչ փոփոխություններ եք նկատում այդ մետաղների գույնների մեջ: Ի՞նչ եք յեղրակացնում առաջին և յերկրորդ աշխատանքներից:

Յերկրորդ աշխատանքի ժամանակ դուք տեսեք, վոր յերկաթի, պղնձի գույնն, ողում տաքացնելիս, փոփոխության յենթարկվեց: Հաստատելու համար, վոր այդպիսի փոփոխության համար ոդն անհրաժեշտ պայման և հանդիսանում, փորձը կատարեք այնպես, վոր տաքացման ժամանակ ողը չփոխ չունենա մետաղի մակերեսի հետ:


Աջամատանք 3. Փորձանոթի մեջ (կամ ուրիշ ամանի մեջ) մի քիչ պարափին (կամ մոմ) հալեք և նրա մեջը գըցեք մի կտոր փայլուն պղինձ, յերկաթ, կապար, այնպիս վոր մետաղները ծածկվեն պարափինի շերտով և տաքացրեք կրակի վրա:

10-15 րոպե տաքացնելուց հետո մետաղը հանեք պարափինի միջից ու տեսեք՝ նրա գույնը փոփոխության յենթարկվել եթե պաչ:

Աւշատանք 4. Վերցրեք պղնձի բարակ թիթեղ և ծաւեք այնպես, վոր ներսից մակերևույթները լավ կպչեն իւրաք (ծեծեք մուրճով) և ապա ունելիքով բռնիք ծալած թիթեղը և տաքացրեք սպիրտայրոցի վրա. Վորոշ ժամանակ տաքացնելուց հետո (10-15 րոպե) թողեք սառի և ապա բաց անելով ծալած թիթեղը, բացատրեք, թե ի՞նչու պղնձի արտաքին շերտը փոխարիվել և ժանդարերտի, իսկ ներսինը մնացել և անփոփոխ:

### ՈԲՍԻԴԱՑԱԾ ՄԵՏԱՂԻ ԿՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՇԻ ՏԵՍԱԿԵՑԻՑ

Աւշատանք 5. Վերցրեք մի քիչ յերկաթփոշի, ածեցեք հաղճապակյա թասի մեջ (կամ թիթեղյա ամանի մեջ), հավասարակշռեք կշռքի վրա և ապա տաքացրեք սպիրտայրոցի վրա 20-25 րոպե: Լավ շիկացնելուց հետո թողեք, յերկաթափոշին սառի ու նորից կշռքի: Ի՞նչ փոփոխության և յենթարկվել յերկաթափոշին քաշի տեսակետից:




Նկ. 1. Սրվակի տաքացնելը և կշռքի նժարի վրա դնելը:

5-րդ աշխատանքի ժամանակ նկատված քաշի ավելացումը ցույց է տալիս, վոր ողը քաշ ունի, վոր միանալով յերկաթփոշուն ավելացնում է նրա քաշը: Վոր իրոք

ողը քաշ ունի, կարելի յե ապացուցել հետեւյալ փորձով: Աւշատանք 6. Վերցրեք ապակի մի մեծ սրվակ, չոր և մաքուր վիճակում, ծածկեք բերանը ուղղինե խցանով և հավասարակշռեք կշռքի վրա: Սրվակը լավ տաքացնելուց հետո (տաքացնելու ժամանակ շարունակ պտտացրեք սրվակը) բերանը իսկույն ծածկեցեք նույն ուղինե խցանով և թողեք սառի: Սառելուց հետո սրվակը նորից կշռքի (նըկար 1): Ի՞նչ տարբերություն եք նկատում կշռի տեսակետից: Ի՞նչով եք բացատրում սրվակի թեթեվանալը: Բաց արեք խցանը և սրվակի հետ միասին նորից կշռքի: Ի՞նչո՞ւ սրվակը նորից հավասարակշռվեց:

### ՈՐԻ ԾԱՎԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵԼԻՄ


Աւշատանք 7. Վերցրեք մի բարակ և մաքուր յերկաթար, վոլորեք, կծիկ շինեք և թացացնելով՝ մացրեք մի փորձանոթի մեջ: Այնուհետեւ այդ փորձանոթը գլխիվայր զրեք կիսով չափ ջրով լցված մի բաժակի մեջ: Համեմատության համար նույն բաժակի մեջ, դարձյալ գլխիվայր դրությամբ, զրեք ուրիշ դատարկ փորձանոթ ու թողեք մնա (նկ. 2): 2—3 որ անցնելուց հետո տեսեք—վոր փորձանոթի մեջ և ջուրը վեր բարձրացեր: Ի՞նչով եք բացատրում յերկաթպարունակող փորձանոթի մեջ ջրի բարձրանալը, իսկ մյուսում նույն տեղում մնալը (Ա. յերկաթպարունակող փորձանոթն և, իսկ բ դատարկ):



Նկ. 2. Յերկաթը ժամանակու ժամանակ կլանում և ողի մի մասը

Աւշատանք 8. Դժվարահալ փորձանոթի բերանին դըրեք ուղղինի մի խցան և վերջինիս միջով անցկացրեք կարծ ապակյա մի խողովակ: Այս խողովակի ծայրին հագցըրեք ուղղինե մի կարծ խողովակ և սրտ ծայրին ել ապա-

կե մի կոր խողովակ: Այնուևհետեւ Ա. փորձ սնոթի մեջ մացըրեք մի քանի կտոր պղնձյա փայլուն թերթիկներ, ռեզինե խողովակը փակեցեք սեղմիչով, իսկ ապակյա կոր խողովակի յերկար ծայրը մտցրեք ջրով լցրած և բաժակի



Նկ. 3. Պղինձը տաքացնելու ժամակակ կլանում և ողի մի մասը: մեջ (նկ. 3), ծանկալի յե, վոր և բաժակը ջուրը ներկված լինի կարմիք կամ այլ գույնով:

Այդ բոլորը պատրաստելուց հետո, տաքացրեք Ա. փորձանոթի մեջ յեղած պղնձե թերթիկները: 15—20 րոպէ տաքացնելուց հետո թողեք փորձանոթը սառի: Փորձանոթը բոլորովին սառելուց հետո, բաց արեք Գ սեղմիչը: Ինչո՞ւ յե ջուրը վեր բարձրանում ապակե խողովակով սեղմիչը բացելուց հետո: Ի՞նչ փոփոխության և յենթարկվել պղինձը տաքության տակ: Ի՞նչ և յեղել փորձանոթի մեջ ողի մի մասը:

### ՏԵՍԱԿԱՆ ԱՆՓՈՓՈՒՄ

Մետաղները—յերկաթ, պղինձ, կապար, ցինկ, անագ և այլն ողում փոփոխվում են, նրանց գույնը փոխվում է: Մի քանի մետաղներ, ինչպես որինակ անագ, կապար, ցինկ, ողում փունափոխվում են շատ արագ կերպով, իսկ մի քանին եւ ինչպես որինակ յերկաթը, պղինձը, սովորական բարեխառնության մեջ դանդաղ են փոխվում, իսկ տաքաց-

ման ժամանակ ավելի արագ (հիշեցեք 1-ին և 2-րդ աշխատանքը):

Ողում մետաղների գունափոխության պատճառը թթվածին գաղն ե, վոր միանալով մետաղի հետ, փոխում ե վերջինիս գույնը: Այդ յերկույթը կոչվում ե ոխտիցաւմ:

Ոքսիդացման ժամանակ առաջացած նյութերը կոչվում են օխտիցեր: Որինակ, յերկաթը միանալով թթվածնի հետ, ստացվում ե յերկաթ ոքսիդ, պղինձը միանալով թթվածնի հետ, ստացվում ե պղինձ ոքսիդ թթվածնը միանալով սնդիկ հետ, ստացվում ե սնդիկ ոքսիդ և այլն.

Վոր, իրոք, ոքսիդացման համար ողն, ավելի ճիշտ նրա թթվածինը հանդիսանում ե անհրաժեշտ պայման, ապացուցում են 3-րդ և 4-րդ աշխատանքները, այսինքն յերբ մենք պղինձը տաքացնում ենք հալված պարաֆինի մեջ կամ ծալում ենք այնպես, վոր ողն անմիջապես շփում չունենա մետաղի հետ, այդ պայմաններում մետաղը չի ոքսիդանում:

Մետաղներն ոքսիդանալիս փոփոխվում են վոչ միայն գույնի, այլև քաշի տեսակետից. նրանց քաշն ավելանում է (աշխ. 5-րդ), Քաշի ավելանալու պատճառն ողի թթվածին ե, վորը միանում ե մետաղի հետ: Այստեղից ել պարզ ե, վոր թթվածինն, ինչպես և մյուս գաղերը, (որինակ ողը) քաշ ունեն (հիշեք 6-րդ աշխատանքը):

Ոքսիդացման յերկույթը կյանքում գործնական խոշոշու նշանակություն ունի: Գործարաններում արհեստական միջոցներով մեծ քանակությամբ զանազան նյութերի ոքսիդներ են ստանում և այդ ոքսիդներից կամ նրանց ողնությամբ զանազան քիմիական նյութեր են պատրաստում և ոգտագործում են արդյունաբերության զանազան ճյուղերում, ինչպես և քիմիական լաբարատորիաներում—զանազան փորձերի համար:

Մետաղների ոքսիդացման մասին մեր ասելիքը վերջացնելուց առաջ, պետք ե ավելացնենք և այն, վոր մետաղները բոլորն ել միատեսակ չեն ոքսիդանում: Մետաղ-

Ներ կան, վորոնք շուտ են ոքսիդանում, մետաղներ կան, վորոնք ողում սովորական պայմաններում կամ չեն ոքսիդանում կամ ոքսիդանում են չնչին չափով, կամ ոքսիդանում են բարձր ջերմաստիճանի տակ: Մետաղներ ել կան, վորոնք բոլորովին չեն ոքսիդանում անգամ ամենաբարձր ջերմության տակ:

Շուտ ոքսիդացող մետաղները կոչվում են անազնիվ մետաղներ. որինակ, կապար, նատրիում, կալիում, կալցիում, յերկաթ, պղինձ, ցինկ, անագ և այլն:

Ուշ ոքսիդացող մետաղները կոչվում են կիսազնիվ մետաղներ: Դրանք են՝ արծաթը և սնդիկը:

Բոլորովին չոքսիդացող մետաղները կոչվում են ազնիվ մետաղներ. դրանք են՝ վոսկին և պլատինը (սպիտակ վոսկի\*):

Շուտ ոքսիդացող մետաղյա իրերն ողի ազգեցությունից ազատ պահելու նպատակով, մարդիկ այդ մետաղյա իրերը պատում են կամ ուշ ոքսիդացող մետաղի շերտով կամ լակով, կամ ներկով: Աչա դրա վրա յե հիմնված պը-ղնձյա ամանների կլայեկումը, յերկաթյա թիթեղները և դույլերը ցինկով պատելը, մետաղյա իրերն եմալով ծածկելը, թիթեղյա կտորների ներկելը և այլն:

Ողի ազգեցությունից, ինչպես տեսանք, մետաղներ փոփոխվում են. այդ ժամանակ փոփոխության ե յենթարկվում նաև ողի ծավալը. այդ յերեվույթը՝ պարզապես ապացուցում են 7-րդ և 8-րդ աշխատանքները:

### ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչո՞վ ե տարբերվում ֆիզիկական յերեսույթը քիմիականից.

\*) Տարբեր մետաղների ոքսիդացումը դիտելու համար, այսպիսի մի աշխատանք կատարեք: Տանը բաց որում թողեք՝ պղնձեց, յերկաթից ցինկից, արծաթից, վոսկուց շինված փայլուն իրերը և մի քանի որ անցնելուց հետո տեսներ, թե ինչ փոփոխության են յենթարկել նրանք գույնի տեսակետից: Վեր մետաղյա իրն ե ոքսիդացել և վորը չի ոքսիդացել:

2. Բերեք ֆիզիկական յերեվույթներից մի քանի որինակ.

3. Թվեք քիմիական յերեսույթների մի քանի որինակներ.

4. Ի՞նչ փոփոխության են յենթարկվում մետաղներն ողում:

5. Ի՞նչն ե հանդիսանում մետաղների փոփոխությունների պատճառն ողում:

6. Մետաղների վրա ազդեցությունը փոփոխության յենթարկվում ե:

7. Ի՞նչ դեր ե կատարում տաքությունը ոքսիդացման գործում:

8. Ի՞նչ փոփոխության ե յենթարկվում մետաղն ոքսիդանալիս քաշի տեսակետից և ի՞նչու.

9. Ի՞նչ տարբերություն կա՝ անազնիվ, կիսազնիվ և ազնիվ մետաղների միջև.

10. Ի՞նչու համար են կլայեկում պղնձյա ամանները, ցինկով պատում յերկաթյա թիթեղները, եմալով ծածկում մետաղյա իրերը և ներկում թիթեղյա կտորները:

Այժմ ծանոթանանք ոքսիդացման պատճառ հանդիպացող թթվածին դագին:

Թթվածնին ծանոթանալու համար դարձյալ մի քանի գործնական աշխատանքներ կատարեք.


### Դ. ԹԹՎԱԾԻՆ ՍՏԱՆԱԼԻ ՅԵՎ ՆՐԱ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աջամանակ 9. Վերցրեք դժվարահալ մի փորձանոթ, ածեցեք նրա մեջ մի քիչ սնդիկոքսիդի փոշի և ուժեղ կերպով տաքացրեք սպիտակյացի (կամ կրակի) վրա: Տաքացնելու ժամանակ ուշադրություն դարձրեք, թե ինչ ե նատում փորձանոթի պատերին: Փորձանոթի մեջ մոցրեք մի փայտիկ, վորի ծայրին կրակ լինի (այդպիսի փայտիկը կոչվում է առկայծող): Ի՞նչ ե լինում առկայծող փայտիկը՝ ինչո՞վ եք բացատրում այդ յերեսույթը:

Աշխատանք 10. Ածեցեք փորձանոթի մեջ մի քիչ բեր սողլետյան աղ և տաքացրեք սպիրտայրոցի վրա, սկզբից թույլ կերպով մինչև աղի հալվելը և ապա ուժեղ կերպով։ Փորձանոթի մեջ մտցրեք մի առկայծող փայտիկ։ Ի՞նչ և լինում փայտիկը։

Թե անդիկոքսիդի և թե բերառոլետյան աղի տաքացան ժամանակ դուրս ե գալիս թթվածին գաղը։ Ուրեմն ի՞նչ հատկություն ունի թթվածինը։

Աշխատանք 11. Վերցրեք մի ուրիշ փորձանոթի, մեջը դարձյալ բերառոլետյան աղ ածեք, տաքացրեք լամպի վրա մինչև հալվելը և ապա փորձանոթի մեջը մտցրեք առկայծող փայտիկը։ Փայտիկը բոցավառվում է թե վոչ։ Դրանից փորձանոթը թեթև կերպով տաքացրեք և նրա մեջ, բերառոլետյան աղի վրա գցեք մի քիչ մանգանգիռօքսիդի փոշի և նորից մացրեք փորձանոթի մեջ առկայծող փայտիկը։ Փայտիկը բոցավառվում է, թե վոչ։ Ի՞նչ յեզրակացություն կազող էք անել այս փորձից։




Նկ. 4. Թթվածնի ստացումը բերառոլետյան աղի և մանգանգիռօքսիդի խառնուրդից։ Փորձանոթի տեղ վերցրած է բետորդ։

Աշխատանք 12. Վերցրեք մի քիչ բերառոլետյան աղ և նրա կեսի չափ մանգանգիռօքսիդի փոշի, լավ խառնեք իրար և ածեք մի լայն փորձանոթի մեջ։ Փորձանոթը փակեք խցանով և վերջինիս միջով անցկացրեք ապակե մի կոր

խողովակ և նրա ծայրին ել անցկացրեք ոետինե խողովակը վորի մյուս ծայրին անցկացրած պետք ել լինի ապակե փոքրիկ կոր խողովակ։ Հետո վերցրեք 3 բանկա, լցրեք ջրով և բերանները ապակով ծածկերով, զլխիվայր շուր տվեք ջրով լցրած մի տաշտի մեջ (նկ. 4):

Այս բոլորը պատրաստելուց հետո փորձանոթը զգուշությամբ տաքացրեք սպիրտայրոցի վրա։ Կարտադրվեթթվածին գաղը։ Յերբ խողովակներից ոդը դուրս կգա, կոր խողովակի ծայրը պղպճակներով կմտնի բանկայի մեջ և դուրս կմղի այնտեղից գաղը։ Ամբողջ ջուրը բանկայից դուրս գալուց հետո, ջրում բանկայի բերանը ծածկեք ապակով և դուրս հանելով ջրից, ուղիղ դրեք սեղանի վրա, բայց բերանը ծածկած պահեք ապակով։ Այդ ձեռվ լցրեք և մյուս բանկաները։ Հետո վերցրեք մետաղյա գղար մեջը դրեք մի փոքր կտոր ածուխ և պահեք կրակի վրա մինչենրա վրա կայծ առաջանա և ապա մտցրեք թթվածնով լցրած բանկաներից մեկի մեջ։ Ի՞նչպես ե այրվում ածուխը թթվածնի մեջ։

Վերցրեք մի ուրիշ գդալ, մեջը ծծումբ ածեք, պահեք սպիրտայրոցի վրա մինչև ծծմբի այրվելը և մտցրեք թթվածնով լցված 2-րդ բանկայի մեջ։ Վերցրեք մի շատ բարակ յերկա-



Նկ. 5. Այրումը թթվածնի մեջ։ ա) մոմի այրումը, բ) ածուխի այրում, գ) յերկաթի այրումը։

թե լար, վոլորեցեք զսպանակի ձևով, ծայրին պահեք փայտածուխի կտոր և վերջինս սպիրտի լամպի վրա պահելով, թողեք վոր կայծ առաջանա նրա վրա և այդպես մտցրեք թթված

Նով լցված Յ-րդ բանկայի մեջ: Ի՞նչպես և այրվում յերկաթը  
թթվածնի մեջ (այս փորձը հաջող և անցնում, յերբ բան-  
կայի մեջ թթվածնի նոր հոսանք և գալիս) (նկ. 5): Բան-  
կան չկոտրվելու համար անհրաժեշտ և նրա մեջ մի բարակ  
շերտ չոր ավաղ ածել:

Աւելատանել 13: Վերցրեք այն բանկաները, վորտեղ այ-  
դիլ եք ածուխ և ծծումք, քիչ ջուր ածեք (Յ-5 խ. ս.) մի  
քանի անգամ թափ տվեք բանկան և ապա նրա մեջ զցեք  
լակմուսի կապույտ թուղթը: Ի՞նչպիսի գույն և ընդունում  
լակմուսը:

Աշխատանքները կատարելուց հետո գրի առեք, թե  
Քնչ նյութերից տաքացներով կարելի յէ թթվածին ստանալ  
և ի՞նչ հատկություն ունի թթվածինը:

### ՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

Մենք արդեն իմացանք, վոր մետաղներն ողում յեն-  
թարկվում են փոփոխության և այդ փոփոխություն առա-  
ջացնողը ողում յեղած թթվածինն ե:

Այժմ ծանոթանանք ողին և թթվածնին ավելի մոտի-  
կից:

Որը թափանցիկ, անհամ, անհոտ, անգույն դազ ե: Նա  
բաղկացած ե զլիսավորապես յերկու զագից—թթվածնից և  
ազոտից (բորակածին): Այդ գաղերը վոչ թե քիմիապես են  
միացած միմիանց հետ, այլ հասարակ խառնուրդ են կազ-  
մում, վորովճետև հեղտությամբ բաժանվում են իրարից:  
Ողի մոտ  $\frac{1}{5}$  մասը կազմում է թթվածինը, իսկ աղոտը  $\frac{4}{5}$   
մասը: Որում կան չնչին քանակությամբ և այլ գաղեր, բայց  
նրանց ուսումնասիրությամբ մենք չենք զբաղվելու:

ԹԹՎԱԾԻՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ, ՆՐԱ ՍՏԱՆԱԼԻ, ՀԱՏԿՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՈՒՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ

Թթվածինը բնության մեջ շատ տարածված նութ ե:  
Աղատ վիճակում մեծ քանակությամբ գտնվում ե ողում:  
Բացի դրանից, թթվածինը բազմաթիվ միությունների բա-

ղադրիչ մասն և կազմում—որինակը, ջրի, ոքսիդների և շատ  
հանքերի:

Թթվածին ստանալու հ սմար շատ յեղանակներ կան:  
Կարելի յէ ստանալ ողից, ջրից, մնդիկոքսիդից, կալիում—  
պերմանդանատից, բերտողետյան աղից և այլն:

Սնդիկոքսիդը կարմրավուն կամ դեղնավուն փոշի յե:  
Յերբ ամանի մեջ տաքացնում են, նա տարրալուծվում ե,  
իր բաղադրիչ մասերի թթվածինը, վորպես գաղ, հեռանումե-  
րսկ մաքուր սնդիկը նստում ե ամանի պատերին (աշխ. 9):  
Սնդիկոքսիդը թանգ նյութ ե և դրա համար, սովորաբար  
նրանից թթվածին չեն ստանում:

Կալիում պերմանդանատի—մույդ մանիշակագույն բյու-  
րեղային նյութ ե: Այս աղը տաքացնելիս հեղատված ար-  
ձակում ե իր մեջ յեղած թթվածինը: Սակայն կալիում պեր-  
մանդանատից թթվածին ստանալը ձեւնուու չի, վորովճետև  
այդ աղը թանգ ե և քիչ ել թթվածին ե արտադրուժ:

Լաբորատորիաներում սովորաբար թթվածինը ստանում  
են բերտողետյան աղից: Այդ աղը սպիտակ գույնի մանր  
բյուրեղներով նյութ ե և իր մեծ քանակությամբ (իր քաշի  
մոտ  $\frac{2}{3}$  մասը) թթվածին ե պարունակում: Յերբ ամանի  
մեջ ածած բերտողետյան աղը տաքացնում են, նա քայքայ-  
վում ե և բաց ե թողնում իր մեջ յեղած թթվածինը (աշխ.  
10-րդ): Բերտողետյան աղից ավելի արագ թթվածին ստա-  
նալու համար, նրա հետ խառնում են մանգան դիոքսիդի  
փոշի (սկ գույնի նյութ ե): Մանգան փիօքսիդը ուեակցիայի  
մեջ չի մտնում, այլ նրա ներկայությունն արագացնում ե  
ուեակցիան (տվյալ գեպքում թթվածնի արտադրումը բեր-  
տողետյան աղից): Այդ ձեռվ ներգործող նյութը քիմիայի  
մեջ կոչվում ե կատալիքատոր (ոժանդակիչ):

Թթվածինն անդույն, անհամ, անհոտ դազ ե: Ողից  
քիչ ծանր, նա ինքը չի այրվում, բայց նպաստում է այր-  
ման: Թթվածնի ներկայությունը մենք իմանում ենք փոր-  
ձով միայն: Յեթե առկայօղ փայտիկը մտցնենք ամանի  
մեջ, վորտեղ թթվածին կա, փայտիկը կրոցավառվի (աշխ.

9-րդ, 10-րդ): Նշանակում և ողում տեղի ունեցող բռլոր այսումները (սքսիգացումը) կատարվում են թթվածնի շնորհիվ Յեթե թթվածին չինի, ապա վոչ մի այրում չի կատարվի հետևապես չի զործի և վոչ մի շոգեմեքենա (ինչժամ).

Բացի այդ, թթվածինն անհրաժեշտ ու բույսերի և կեն-  
դանիների շնչառության համար։ Առանց թթվածնի չի լինի  
վոչ բույս և վոչ ել կենդանի։

ինչպես տեսնում եք, թթվածինն ամենաանհրաժեշտ  
նյութն ե բնության մեջ և նրա մասին ձեր սովորածները  
չպետք ե մոռանաք:

Մաքուր թթվածինը տեխնիկայում գործ էն ածում շատ մեծ ջերմություն սաանալու համար (ջրածնի հետ խառնած 200-ից ավելի ջերմություն ե տալիս) մի քանի դժվարահալ մետաղներ հալելու նպատակով:

Բժշկության մեջ գործ են ածում արհեստական շնչառություն առաջացնելու նպատակով։ Ստորջրյա աշխատանքների և ողանավագնացության համար։

Խիստ սեղմված թթվածինը պահում են հաստ պատերով գլանաձև ամառների (բալոնների) մեջ, վորոնցով և տեղափոխում են մի տեղից մի ուրիշ տեղ՝ ողտագործելու համար:

## Առողջական հարցեր

- Ի՞նչպիսի գաղերից և բաղկացած ողը և վհրն և ավելի շատ:
  - Ի՞նչ նյութերից տաքացնելով կարելի յեւ ստանալ թթվածին:
  - Ի՞նչպիսի աղեցություն ունի մանդանդիոքսիդը թթվածնի արտադրման վրա բերառեցյան աղից:
  - Ի՞նչ հատկություններ ունի թթվածինը:
  - Ի՞նչո՞ւ համար են ոդտագործում թթվածինը:

Ответственный редактор  
М. О. Пирумян  
Технический редактор  
Г. М. Маркарян

Nº 2258  
1932

Сд. в набор 8/III—1932 г.  
Сд. в печать 22/III—19 2 г.  
Об'ем  $\frac{3}{4}$  печ. листа  
Гираж 1100 экз.

Уполномоченного № 1265. Газета тип СККПО. Стартовомат Б6 125Х176. Заказ № 1301  
Гор. Ростов на Дону. Знаков 41000



THE SIEGMARCKOW ASPIRES

*Syndicate member Geoteknik Technologies*

1-24. НИМІХ'ЮВАННЯ

HRISTIYAN-DET' A RNESTO

## СИНЕМЫ МАКСА

ପାତ୍ରମାନଙ୍କ ପାତ୍ରମାନ  
(ପାତ୍ରମାନଙ୍କ) ଶାଖା

«Ազգային գուշուարտ»



NL0265548

10884

Ar  
2-604a



На армянском языке

Заочные курсы Педагогич. Техникума

ЗАДАНИЯ ПО ХИМИИ № 1

составил А. Тер-Атанасян

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱՊԱՌԵՎՈՒԹՅՈՒՆ

ԱԼԱՍՈՎ-ԴՐՈ, ՄՈՎԻՉՎԻՉՎԱՆ ՓՈԴ., 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԵԿՈՎԵՆՏՐ)

54(07)

K - 26